

Ա Ր Ի Ւ Ն Ը

9.

Ա Ր Ե Ա Յ Ն Հ Ե Բ Մ Ա Յ Ա Գ Ե Բ Ի Ն Ե Բ Ի Բ Ը (Շար.)

Ճերմակ գնդիկները միայն անզործարանական մասնիկները չեն կրնան որսալ, մարսել և անմարսելի մասցորդները դուրս վտարել, ինչպէս այդ կ'ընեն բոլոր միւս բջիջ կենդանիները կաթիլ մը ջուրի մէջ, այլ նաև արթնին կամ մեր հիւսուածքներուն մէջ պատահարար մտած մանրէները:

Ըսնաք երկու խօսքով թէ մանրէները շատ փոքր, մանրագիտակային միարջիջ արարածներ են, որոնք, ամենգերական անտեսութեան մէջ, կարգ մը կարեւոր գերերու շարքին մարգկային և կենդանական շատ մը հիւանդութիւններու պատճառ կը հանդիսանան:

Մանրէները՝ որոնք տարածուած են օդին, ջուրին մէջ, գետնին վրայ, կրնան մանել մեր թոքերու, ստամոքսի, աղիքներու և մորթի վերքերուն, և խոցերէն օգտուելով՝ մեր կազմուածքին մէջ, հոն աճիլ և զարգանալ և առաջ բերել վարակիչ հիւանդութիւններ, ինչպէս թոքախար, քոլերան, ժանոտախտը, մալարիան, կեղծմաշկը, ժանտատինը եւայլին:

Բաւական է որ մեր կազմուածքին որ և է մէկ մասին մէջ մըտնին այդ մանրէները և առաջ ամէն կողմէն գէպի այդ կէտը կը շարժին ճերմակ գնդիկները, դուրս կ'ելլեն մազերակներու պատերէն, իրենց թաթիկներով կը շրջապատեն մանրէները, իրենց մէջ կ'առնեն և կ'աշխատին մարսել և ոչնչացնել ինչպէս ճարպի մասնիկ մը կամ սպիտապին նիւթի կաոր մը:

Ամէն աեսակ վարակիչ հիւանդութիւններու ընթացքին, մահու և կենաց կատաղի պայքար մըն է, որ աեղի կ'ունենայ ճերմակ գնդիկներու և մանրէներու մէջ: Երբ այդ կառի մէջ յաղթող հանդիսանան ճերմակ գնդիկները, մեր կազմուածքը կ'ազատուի հիւանդութեան վըտանգէն: Իսկ եթէ մանրէները յաղթեն, անոնք կը մնացնեն զիրենք շրջապատող ճերմակ գնդիկները, ազատ կ'աճին, կը վարակին, կը թունաւորին և կը մնացնեն հիւանդ մարմինը:

Այդ կախին մէջ յաղթողը, ինչպէս ամէն կախի մէջ, միշտ ուժեղըն է: այսաեղ եւս կը զործազրուի բնութեան անխիզն օրէնքը՝ ուժեղը կը ափրէ թոյլին:

Բայց մանրէներու գէմ կոռուին մէջ, ճերմակ գնդիկները չեն բաւականանար միայն ֆիզիքապէս բնաջնջելով զանոնք Միեւնոյն ժամանակ անոնք կ'արտազքին այնպիսի նիւթեր—հակաթոյներ—որոնք խառնուելով արեան՝ մեր արեան շիճուկին կուտան — ինչպէս աեսանք—մանրէասպան ուժ մը, ինչպէս նաև մանրէները կուտակելու և լուծելու յատկութիւնները:

Մեր կազմուածքին մէջ պատրաստուած հակաթոյները կրնան սպակար ըլլալ ուրիշ վարակուած հիւանդ կազմուածքի մը մէջ մանրէները ոչնչացնելու. այդ սկզբունքին վրայ է հիմնուած շինաբուժութիւնը: Այս առթիւ պէտք է յիշել ուսւ գիտնական Մէջնիկովի անունը, որ գտաւ և նկարագրեց ճերմակ գնդիկներու մանրէակեր յատկութիւնը և Շարլ Ռիշէի, Ռուի, Պէրինկի, Բիւխնէրի անունները, անո՞նք հիմնեցին և զարկ տուին շիճարանութեան և շիճարութութեան:

Ճերմակ գնդիկները ունին նաեւ ուրիշ կարողութիւններ: Անոնք կը դիւրացնեն սնունդներու իւրացումը (assimilation) մեր հիւսուածքներու բջիջներուն կողմէն: Արդարեւ, անոնք կ'արտադրեն այնպիսի նիւթեր, որոնց չնորհիւ ուլան (amidon), ճարպային մասնիկները, ինչպէս նաեւ սպիտները, որոնք առիքային մարսողութենէն վերջ արիւնին մէջ կ'անցնին, կը փոխակերպուին այնպիսի վիճակներու, որ մեր մարմինի բջիջները այլևս դժուարութիւն չեն կրեր զանոնք մարսելու, իւրացնելու:

Երբ մեր կազմուածքին մէկ մասը պէտք ունենայ սովորականէն աւելի սնունդի, հիւանդութենէ, վէրքերէ ապաքինելու պարագային, կամ չափազանց գործունէութեան պատճառով, սպիտակ գնդիկներն են, որ մեծ քանակութեամբ խուժելով դէպի այդ օրկանները, անոր կը բերեն կորուստը փոխարինող նոր և առատ սննդանիւթեր:

Բայց այդ պարագային անոնք ունին ուրիշ և բոլորովին տարբեր պաշտօն մը եւա:

Մեր կազմուածքին մէջ չկայ գործարան մը, հիւսուածք մը, բջիջ մը, որ մեր կեանքին ընթացքին քանի մը անգամ չնորոգուի: Մկանները, ջիղերը, մինչեւ իսկ ամենակարծր հիւսուածքը՝ ոսկորները շարունակաբար կը փոխեն, կը վերանորոգեն իրենց բջիջները: Հիները կը մաշին, կը քայքայուին և նորերը կուգան անոնց տեղը բռնելու ինչպէս տեսանք, նորերուն սննդանիւթերը կամ վերաշինութեան նիւթերը ճերմակ գնդիկներն են որ կը հայթայթեն, բայց մաշած, մեռած բջիջներու դիակները, մնացորդները, նոյնպէս կը կլանուին ճերմակ գնդիկներուն կողմէ և այդպէսով կը հեռացուին պատերազմի դաշտէն:

Այնպէս որ ճերմակ գնդիկները ոչ միայն կը պաշտպանեն մեր կազմուածքը արտաքին յարձակումներու դէմ, ոչ միայն մարսելի, իւրացուելի կը դարձնեն բջիջներուն յատկացուած սննդանիւթերը և կը տարածեն ու կը բաժնեն զանոնք ըստ պէտքի և ըստ պատկանելութեան մեր կազմուածքի ամենամութ անկիւնները, այլեւ կը կատարեն բարեխսդութեամբ աղտահանիչներու գերը և կը մաքրեն մեր կազմուածքը հոն կուտակուած անմաքրութիւններէն: